

**ԳԱՆՁԱՊԵՏ ԵՎ ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՈՒՉ ՔԵՅԹ ՆՈՔՍԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐԸ
COVID-19-Ի ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՊՐԻԼԻ 19-Ի ՎԵՐՁՆԱԺԱՄԿԵՏԻ
ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ**

Ես հասկանում եմ, որ մենք ապրում ենք դժվար ժամանակահատվածում, որը հատկապես ծանր է համաշխարհային առողջապահական ճգնաժամից ուղղակիորեն տուժած մարդկանց համար: Նման պայմաններում իմ գրասենյակը փորձում է հնարավոր աջակցությունը ցուցաբերել մարդկանց: Եթե Լոս Անջելես Վարչաշրջանի գույքատերերը COVID-19-ով պայմանավորված իրավիճակի պատճառով չկարողանան մուծել իրենց գույքահարկը մինչև սահմանված վերջնաժամկետը՝ ապրիլի 10-ը, ապա հնարավոր է, որ ժամանակին չվճարելու պատճառով գոյացած տուգանքները չեղարկվեն:

Մենք իրավունք չունենք երկարացնելու Նահանգային օրենսդրության կողմից սահմանված վերջնաժամկետը՝ ապրիլի 10-ը: Սակայն գույքահարկի վճարման վերջնաժամկետին հաջորդող օրվանից՝ ապրիլի 11-ից սկսած այն անձինք, ովքեր COVID-19-ով պայմանավորված իրավիճակի պատճառով չեն կարողացել ժամանակին մուծել իրենց գույքահարկը, կարող են առցանց ներկայացնել դիմում տուգանքների չեղարկման համար: Դեպարտամենտը ձևավորել է հատուկ թիմ, որը կդիտարկի այն անձանցից ստացված դիմումները, ովքեր կարող են ապացուցել, որ չեն կատարել վճարումները COVID-19-ով պայմանավորված իրավիճակի պատճառով:

Բոլոր այն գույքատերերին, որոնք կարող են ժամանակին վճարել իրենց հարկերը, մենք խրախուսում ենք դա անել: Այս եկամուտն օգնում է ապահովել կառավարության բնականոն աշխատանքը և տրամադրել հանրության համար կարևոր կենսապահովման ծառայություններ, որոնք հատկապես կարևոր են ճգնաժամային իրավիճակներում:

Քանի որ Վարչաշրջանի գրասենյակները ճգնաժամի պատճառով ներկայումս այցելուների համար փակ են, կանխիկ վճարումներ չեն ընդունվում: Փոխարենը՝ հարկատուները կարող են վճարել առցանց, հեռախոսի կամ փոստի միջոցով: Էլեկտրոնային չեկերի առցանց վճարման համար գումար չի գանձվում: Առցանց վարկային/դեբետային քարտերով գործարքների համար քարտային վճարումներ մշակող ընկերությունը գանձում է 2,25% սպասարկման վճար:

Մենք պատրաստել ենք Հաճախ տրվող հարցերի (ՀՏՀ) պատասխաններ: [Սեղմեք այստեղ՝ մեր ՀՏՀ բաժինը տեսնելու համար:](#)

Հարկատուները կարող են այցելել նաև <https://ttc.lacounty.gov/> կայքը՝ վճարման եղանակներին և առցանց ինքնասպասարկման մի շարք այլ տարբերակներին ծանոթանալու համար: Հարկատուները կարող են նաև զանգահարել (213) 974-2111 հեռախոսահամարով՝ լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար: